անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 60.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանների համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Հասմիկ Օհանյան Սուրենի» Ա/Ձ-ի հայցն ընդդեմ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի՝ ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Հասմիկ Օհանյան Սուրենի» Ա/Ձ-ի միջև 16.04.2025թ. կնքված թիվ «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք մատակարարված ապրանքն ընդունել և դրա դիմաց վճարել պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Հասմիկ Օհանյան Սուրենի» Ա/Ձ-ի միջև 16.04.2025թ. կնքված թիվ «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը:

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին պարտավորեցնել «Հասմիկ Օհանյան Սուրենի» Ա/Ձ-ից ընդունել թիվ «ԿԲԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքը և վճարել դրա դիմաց:

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Հասմիկ Օհանյան Սուրենի» Ա/Ձ-ի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանների համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE68-C418-4899-9568 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am